«Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Sport and Concert Complex after K. Demirchyan SNCO
ГНО “Спортивно-концертный комплекс имени К. Демирчяна”

...ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
...О "СПОРТИВНО-КОНЦЕРТНЫЙ КОМПЛЕКС"
SPORTS AND CONCERTS COMPLEX" SNCO
ԵԼՔ № 13
17 » 05 2017 թ. Г. У.

«Ասատրյանս» ՍՊԸ-ի տնօրեն՝

պարոն Ս.Ասատրյանին

Հարգելի պարոն Ասատրյան

«Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ մարզահամերգային համալիր) և «Ասատրյանս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՍՊԸ) միջև 13.03.2017 թվականին կնքված ԿԴՄՀՀ-ՊԸԾՁԲ-17/2 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) համաձայն՝ մարզահամերգային համալիրը ՍՊԸ-ից ձեռք է բերելու հիմնական միջոցների գույքագրման համակարգ և գույքագրման ծառայությունների մատուցում՝ համաձայն պայմանագրի 1.1 կետի, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի:

13.03.2017թվականից մինչ օրս ՍՊԸ-ն չի ստանձնել պայմանագրով իրեն վերապահված պարտավորությունների կատարումը. այն է՝ պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված հիմնական միջոցների գույքագրման համակարգի տրամադրումը և այդ համակարգի միջոցով իրականացվող ծառայությունների մատուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ **«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:**

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **«Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»:**

Հիմք ընդունելով նշված գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման առաջարկությունը և այն հանգամանքը, որ ՍՊԸ-ի կողմից խախտվել են պայմանագրով

Հասցե՝. ՀՀ, Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1, հեռ.՝ (+37411)75 55 02, էլ. փոստ՝ scc.armenia@gmail.com
Адрес: РА, г. Ереван, 0028, Парк Цицернакаберд 1, тел.: (+37411)75 55 02, эл. почта: scc.armenia@gmail.com
Address: 1 Park Tsitsernakaberd, 0028, Yerevan, RA, tel.: (+37411)75 55 02, e.mail: scc.armenia@gmail.com

նախատեսված պարտավորությունները՝ մարզահամերգային համալիրը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և պայմանագրի դրույթներով՝ միակողմանի հրաժարվում է «Ասատրյանս» ՍՊԸ-ի հետ ԿԴՄՀՀ-ՊԸՃԶԲ-17/2 ծածկագրով կնքված գնման պայմանագրից, որի դեպքում պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համարվում է լուծված:

Վերոգրյալով պայմանավորված՝ ներկայացնում եմ Ձեզ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը, որը նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված կարգի 36-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

Հարգանքով՝

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ Վ.ԱՍԱՏՐՅԱՆ

Հասցե՝. ՀՀ, Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1, հեռ.՝ (+37411)75 55 02, Էլ. փոստ՝ scc.armenia@gmail.com
Адрес: РА, г. Ереван, 0028, Парк Цицернакаберд 1, тел.: (+37411)75 55 02, эл. почта: scc.armenia@gmail.com
Address: 1 Park Tsitsernakaberd, 0028, Yerevan, RA, tel.: (+37411)75 55 02, e.mail: scc.armenia@gmail.com